ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Մարո Քարամյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՀՀ Սյունիքի մարզ, Տեղի հմր.1 միջն. դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Սոնա Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2022

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1. Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացման առանձնահատկությունները 5

2. Սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացումը հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում 8

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 14

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 15

Հավելված I 16

Հավելված II 17

Հավելված III 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեզուն հայրենիք է, մտածողություն է, հուգու տաճար է…

Հայտնի է, որ դասը ուսումնական գործընթացի հիմնական բաղկացուցիչ մասն է: Ուսուցչի և աշակերտների ուսումնական գործունեությունը համատեղվում է դասի ժամանակ: Դասի ընթացքում մյուս կարողությունների, հմտությունների հետ զարգացվում են նաև սովորողների ստեղծագործական ունակությունները և կարողությունները: Ուսուցիչը պետք է հասնի նրան, որ սովորողները թե՛ դասի ընթացքում, թե՛ դասից դուրս կարողանան ստեղծագործաբար կիրառել ձեռք բերած գիտելիքները, խորհել, ենթադրություններ անել, ինքնուրույնաբար դատել, մտածել, վերլուծել, կատարել տեսական ու գործնական առաջադրանքներ, ուսումնական նյութի մեջ գտնել գլխավորը, առանցքային խնդիրը: Ուսուցիչը պետք է կարողանա որոնել ու գտնել ուսուցման այնպիսի մեթոդներ ու հնարներ, որոնք կխթանեն սովորողների ստեղծագործական ունակություններն ու կարողությունները: Որպեսզի դասը արդյունավետ լինի, անհրաժեշտ է, որ ուսուցիչը դասին նախապատրաստվելուց առաջ ձգտի իր դասը դարձնել ինքնատիպ ստեղծագործություն: Այդպիսի դասը երեխայի մեջ կառաջացնի անկեղծ հետաքրքրություն, կգրավի նրան, կձևավորի կզարգացնի նրա ստեղծագործական մտածողությունը: Ուսումնական նյութը պլանավորելիս պետք է ընտրել ուսումնական առաջադրանքներ, որոնց նպատակները պետք է լինեն նոր նյութի իմացությունը, վերարտադրությունը, նոր, անծանոթ իրավիճակներում գիտելիքների կիրառումը, գիտելիքների նկատմամբ ստեղծագործական մոտեցումը:

Ինչպե՞ս ստեղծել գրավիչ ու հետաքրքիր դաս: Յուրաքանչյուր դաս պետք է իր մեջ պարունակի ինչ-որ բան, որը աշակերտի մեջ կառաջացնի զարմանք ու հիացմունք, այն, ինչը երկար կհիշվի. դա կարող է լինել հետաքրքիր փաստ, անսպասելի բացահայտում, ոչ ստանդարտ մոտեցում (ուսուցչի կողմից հանպատրաստից գեղեցիկ ասմունք, երգ, պար, բեմականացում, ժեստ, բացականչություն, շարադրության նմուշ և այլն):

Ստեղծագործական կարողությունների զարգացման նպատակով ուսուցիչը պետք է օգտագործի ուսուցման ակտիվ մեթոդներ: Դրանց կիրառման դեպքում սովորողի գործունեությունը ձեռք է բերում արդյունավետ ստեղծագործական-որոնողական բնույթ:

Գիտական ու տեխնիկական առաջընթացով պայմանավորված՝ կրթական համակարգում նույնպես շարունակական կերպով տեղի են ունենում արդիականացման գործընթացներ, որոնց հիմնական նպատակն է համակարգել հնարավոր բոլոր ռեսուրսները՝ տեխնոլոգիական, մարդկային՝դրանք ծառայեցնելով կրթական նոր ու արդիական որակների ապահովմանը: Ակնհայտ է, որ վերջին տասնամյակում կրթական բարեփոխումների առանցքում կրթության առաջնային շահակից հանդիսացող սովորողների գործառույթների ու պարտականությունների վերարժևորումն է՝ հաշվի առնելով ժամանակի մարտահրավերները:

Նոր ինտերակտիվ մեթոդների ներդրումը կրթական համակարգ հնարավորություն է տալիս սովորողին դառնալ դասի ընթացքի անմիջական նախագծողը, ինչի արդյունքում բուն դասապրոցեսը դադարում է սովորողի համար լինել ձանձրալի, ավելին՝ սովորողը մոտիվացվում է, իսկ այդ մոտիվացիայի պատճառներից մեկն էլ աշակերտակենտրոն ուսուցումն է: Փաստորեն, կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և սովորողի դերի ու գործառույթների վերարժևորում: Նմանօրինակ բարեփոխումները մեծապես խթանում են սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացմանը, ինչպես նաև ստեղծագործ մտածելու ու գործելու կարողությանը:

Այս համատեքստում առանձնակի կարևորություն ունի հայոց լեզու առարկայի դասավանդումը, որի շրջանակներում ուսուցիչը զանազան մեթոդամանկավարժական հնարների, դասի զանազան տիպերի ու ձևերի ներդրմամբ կարող է հասնել հանրակրթական պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին, որոնցից են՝ սովորողների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգի բարեփոխումների արդի շրջափուլում կրթական չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքներով, համաձայն որոնց ուսուցիչն ամեն կերպ պետք է խթանի սովորողի ինքնուրույն մտածելու, կշռադատելու, որպես նախաձեռնող հանդես գալու, ստեղծագործական մտածելու

ունակությունները՝ ամեն կերպ խթանելով սովորողի ինքնուրույն գործելու ցանկացած դրսևորում:

Հետազոտության նպատակը: Աշխատանքը նպատակ ունի շեշտադրելու աշակերտակենտրոն դասի կարևորությունը՝ որպես կրթության որակի բարձրացման հիմնական նախապայման, այդ գործընթացում կարևորելու ուսուցիչ-աշակերտ համագործակցությունը, ինչպես նաև ուսուցչի ֆունկցիոնալ դերը սովորողի ինքնուրույնության, ստեղծարարության ու նախաձեռնողականության դրսևորումների որակի բարձրացման համատեքստում:

Հետազոտության խնդիրը: Առաջադիր նպատակից բխող խնդիրներն են՝

- **ներկայացնել** սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացման առանձնահատկությունները,
- **ցուցահանել** հայոց լեզվի և գրականության դասերին սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացման եղանակները:

Աշխատանքի օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակություններն են, իսկ առարկան՝ այդ ունակությունների զարգացման ուղիները:

Հետազոտության մեթոդներ: Հետազոտությունն իրականացնելու համար օգտագործել ենք վերացարկման և վերլուծության մեթոդները:

1. Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացման առանձնահատկությունները

Այսօր, առավել քան երբևէ, մարդու ցանկացած գործունեության համար առանցքային նշանակություն ունեն ինքնուրույն որոշումներ կայացնելու, արագ ու նպատակային գործելու, ինչպես նաև նախաձեռնող լինելու ունակությունները: Նման ունակությունների անհրաժեշտությունը բացատրվում է ժամանակի առաջ քաշած մարտահրավերներով, երբ ամենժամյա ռեժիմով կյանքի բոլոր ոլորտները գրանցում են աննախադեպ առաջընթաց: Վերը նշած որակները, հմտություններն ու կարողությունները, որպես կանոն, սաղմնավորվում ու զարգանում են հանրակրթական ուսումնական հաստատությունում, որտեղ կայանում է անձի կրթական ու դաստիարակչական առանցքային գործընթացը, ուստի հենց այստեղ է, որ

մարդն իր կյանքի առանցքային մի քանի շրջափուլերում սկսում է գործել ինքնուրույն, հանդես գալ նախաձեռնողի դերում:

Զարգանում ու արդիականացվում է նաև կրթական համակարգը՝ փորձելով իրացնել նոր աշխարհի կանոններով ապրող մարդու կրթության իրավունքը՝ հաշվի առնելով կրթական նոր տեխնոլոգիաներն ու առաջավոր փորձը:

Ուսումնական գործընթացի առանցքում սովորողն ու սովորեցնողն են: Դիտարկելով սովորեցնողի դերակատարումը ուսումնական գորընթացի արդյունավետ իրականացման տեսանկյունից՝ հարկ է նշել, որ ուսուցչի մասնագիտական և անձնային որակներն էական նշանակություն ունեն: Ժամանակակից ուսուցչի որակներից հատկապես առանձնացնենք հանդուրժողականությունը, շփվելու, հաղորդակցվելու, համագործակցելու կարողությունը, գենդերային անկողմնակալությունը և այլն:

Եթե ինչ-որ ժամանակ սովորողին պարտադրվում էր այս կամ այն գիտելիքի, հմտության յուրացումը, ապա այսօր երեխան ինքն է իրեն ձևավորում, իսկ ուսուցիչը, պարզապես փորձում է ազդել նրա վրա: Եթե այդ ազդեցությունը «չի խոսում» սովորողի ներքին աշխարհի հետ, այն ետ է մղվում երեխայի կողմից: Այնուամենայնիվ, կրթական գործընթացի բոլոր մասնակիցները փոխլրացնում են միմյանց, այդ իսկ պատճառով կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է նաև նրանով, թե որքանով են ուսուցիչները պատրաստ համագործակցության ու փոխվստահության մթնոլորտի ձևավորման:

Այդ առումով մեծ է ուսուցման ակտիվ կամ փոխգործուն մեթոդների կիրառման դերը: Փոխգործուն մեթոդներից են տարատեսակ վարժությունները, փորձերը, հետազոտությունները և մոդելավորումը, որոնց գործարկման կարևոր սկզբունքներն են՝

- փոխազդեցությունը, փոխուսուցումը,
- սովորողների միջև համագործակցությունը,
- ինքնարտահայտման, սովորողի կարծիքի, դիրքորոշման պնդման խրախուսումը,

- հետադարձ կապը:[1]

Իսկ մեթոդական առանձնահատկություններից կարելի է նշել հետևյալները՝

- սովորողի իմացական գործընթացների կազմակերպումը,
- հետաքրքրությունների, նախասիրությունների բացահայտումը,
- համագործակցային կարողությունների զարգացումը,
- անհատական առանձնահատկությունների բացահայտումը,
- հաղորդակցական ունակությունների ձևավորումը,
- տրամաբանական մտածողության զարգացումը,
- ինքնուրույնության խրախուսումը,
- վերլուծական կարողությունների ձևավորումը:[2]

Այնուամենայնիվ, կցանկանայինք շեշտել, որ այս համատեքստում բնավ չեն ստորադասվում դասավանդման ավանդական մեթոդները, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը:

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ «ՈՒսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը»:[3]

Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացման համար արդի պայմաններում առանցքային դերակատարում ունեն նաև դասավանդման մեջ ՏՀՏ գործիքների կիրառումը: Նորագույն տեխնոլոգիաներով հագեցած դասերն ունակ են սովորողների մոտ հետաքրքրություն առաջացնելու կրթական պարտադիր ծրագրերով նախատեսված առարկաների հանդեպ: Սովորողը, կիրառելով իրեն հարմար համացանցային հարթակը կամ գործիքը,

---

[1] Գաբրիելյան Է., Ուսուցման մեթոդներ, https://bit.ly/3TSA7lE (մուտք՝ 26.10.2022):
[2] Նույն տեղում:
[3] Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան, 2020, էջ 22:

ինքնուրույն կարող է ուսուցանվող թեմայի շուրջ տեղեկություն հավաքել, հետազոտել, ծանոթանալ առաջարկվող ուսումնաօժանդակ առցանց նյութերին: Որպես արդյունք տացվում է, որ համացանցը սովորողի համար դառնում է գործիք, որի օգնությամբ նա հեշտությամբ կարողանում է կառավարել իրեն անհրաժեշտ տեղեկատվական հոսքերը՝ ունենալով ինքնուրույն հետազոտելու և նախաձեռնողի դերում հանդես գալու ցանկություն:

Հանրակրթական դպրոցում սովորողի ինքնուրույնության և նախաձեռնության զարգացմանը նպաստում է նաև ուսուցչի մեթոդամանկավարժական գիտելիքների ամբողջությունը: Դասի փուլերի հաջորդականության ապահովումը, նոր նյութի հաղորդման, ամրապնդման և ամփոփման ժամանակ ինտերակտիվ մեթոդների կիրառումը, միջառարկայական ու ներառարկայական կապերի ստեղծումը իրենց հերթին շահագրգռում են պասիվ սովորողներին՝ ամեն կերպ վերջիններիս բերելով ակտիվ դաշտ: Այս պարագայում ակնհայտ է, որ ուսուցիչը կարիք չի ունենա սովորողի ուշադրությունը արհեստական կերպով սևեռելու դասին, քանի որ դասի ընթացքն ակտիվ է, ՏՀՏ բաղադրիչը տեղում է, փոխգործուն զանազան մեթոդները կիրառվում են, ուստի սովորողը սկսում է ցուցաբերել նախաձեռնություն, խմբային կամ անհատական աշխատանքի ժամանակ էլ՝ լավագույն արդյունքներ գրանցելու մղում:

2. Սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացումը հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում

Կրթության և դաստիարակության գործընթացում ստեղծագործ անհատականության զարգացումը ժամանակակից կրթական համակարգի կարևոր բաղադրիչներից է: Որպես կրթության բարձրագույն նպատակ է սահմանվում ինքնազարգացող, ստեղծագործաբար մտածող ու գործող սովորողի ձևավորումը, որը ունակ է ստեղծագործական բաց փոխազդեցության միջավայրի և հասարակության հետ:

Ուսուցման արդյունավետությունը չափվում է ոչ միայն և ոչ այնքան աշակերտի յուրացրած գիտելիքներով, որքան նրա ձեռք բերած կարողություններով: Այս խնդիրը լուծելի է դառնում, երբ ուսուցման ընթացքում վերաբաշխվում են հիմնական

արժեքները. ուսումնառության ընթացքում ուսումնառողը պասիվ ընկալողից վերածվում է ակտիվ և գործուն մասնակցի, դասավանդողը հրաժարվում է սովորեցնողի, վերահսկողի, խրատողի իր դերից և դառնում է այդ գործընթացի կազմակերպող, խորհրդատու և որպես գործընկեր՝ ուսումնառողի հետ մասնակցում է հետազոտական աշխատանքներին:

Մինչև այսօր ուսուցում – ուսումնառություն գործընթացում մենք ճանաչում ենք երկու կողմ. սուբյեկտ, այսինքն՝ ուսուցիչ, որը սովորեցնում է, և օբյեկտ՝ աշակերտ, որին սովորեցնում են: Ժամանակակից մանկավարժությունը նույն գործընթացում տարբերակում է երկու սուբյեկտ: Ուսուցման ընթացքում թե՛ ուսուցիչը, թե՛ աշակերտը փոխգործուն հարաբերությունների մեջ են:

Ահա ներկա այս բարեփոխումների համատեքստում է, որ հանրակրթության առջև դրված մարտահրավերներից մեկը ստեղծագործական զարգացման առավել օպտիմալ ուղիների որոնումն է: Սովորողի ստեղծագործական կարողությունների զարգացման առյուծի բաժինը դպրոցում է իրականացվում: Հատկապես հայոց լեզվի դասընթացի շրջանակներում, հիմնական լեզվական գիտելիքների հաղորդմանը զուգահեռ, սովորողը հնարավորություն ունի իր ստեղծագործական ունակությունները զարգացնելու՝ համադրելով գիտելիքի ստացման գործընթացի հետ:

Հայոց լեզվի դասընթացը դպրոցում առաջին հերթին նպատակ ունի առաջնային լեզվական գիտելիքների հաղորդման, կրթական տարբեր մակարդակներում դրա ծավալների խորացման: Լեզվական և հաղորդակցական կարողություններն անկյունաքարային են ցանկացած գործունեություն ծավալելու ընթացքում: Այս կարողության բնականոն զարգացումով է պայմանավորված նաև հանրակրթական հաստատությունում սովորողի զարգացումն ու մտավոր առաջընթացը, ուստի և ցանկացած ուսումնական գործընթացի անբաժանելի ու փոխկապակցված բաղադրիչը հենց բնականոն զարգացող հաղորդակցումն է: Ուսուցիչը պետք է ամեն կերպ նպաստի այս կարողության զարգացմանը, որը կհամապատասխանի տարիքային առանձնահատկություններին:

Շատ կարևոր է հայոց լեզվի դասաժամի ընթացքում պայմաններ ստեղծել, որ դասի ժամանակ սովորողի դերը լինի ավելի ակտիվ, նա ուղղակի կերպով լինի դասի ընթացքի կենտրոնում, չլինի պասիվ, այլ հնարավորինս շատ խոսի, մեկնաբանի,

կարծիք հայտնի: Ակտիվ խոսքը հնարավորություն է տալիս, որ սովորողն ավելի արագ զարգացնի կապակցված խոսքը, հղկի, կոկի, գեղեցկացնի այն, բացահայտի իր ստեղծագործական ներուժը, կիրառի այն տարաբնույթ առաջադրանքների իրականացման ժամանակ: Անշուշտ, լեզվական գիտելիքների հաղորդումը միջին և ավագ դպրոցում արդյունավետ կարելի է համարել միմիայն այն պարագայում, երբ դրան նախորդած մյուս փուլերը՝ լեզվական հիմնական միավորների ուսուցումը, բառային ֆոնդի հարստացումը, քերականական կառուցվածքի ձևավորումը, նույնպես իրականացված լինեն արդյունավետ, քանի որ հենց այս հենքի վրա է, որ սովորողն ունենում է լիարժեք կապակցված խոսք, լեզվական կայուն գիտելիքներ և դրանցով պայմանավորված հմտություններ ու կարողություններ:

Հայոց լեզվի և գրականության դասաժամին սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացնելու այլ միջոցներից են ստեղծագործական, վերլուծական շարադրությունները, նկարագրական տեքստերի հետ աշխատանքը: Սովորողի ստեղծագործական կարողունակությունների զարգացմանը նպաստող ուղենիշային միջոցներ են նաև փոխադրությունը, թելադրությունը, էսսեն, թեստային առաջադրանքները, գործնական գրությունները, սեղմագրերը, որևէ թեմայի հետազոտությամբ սցենար կազմելը, հետազոտական–նախագծային աշխատանքները, գրավոր և բանավոր կապակցված խոսքի զարգացմանը նպաստող առաջադրանքները, բառային և տեքստային ամենատարբեր աշխատանքները: Նմանօրինակ աշխատանքների իրականացման ճանապարհին սովորողի մեջ խորանում են ինքնուրույն աշխատելու ձգտումը, աշխատանքին ստեղծագործաբար մոտենալը:

Անսահման է գեղարվեստական գրականության դերը անհատի և սովորողների ստեղծագործական մտածողության՝ իբրև խոսքի վերարտադրման զարգացման գործոն: Լեզուն տալիս է խոսքի կառուցման տրամաբանական օրինաչափությունները իսկ գրականությունը այդ օրինաչափությունները հարստացնում է արվեստով, պատկերավորությամբ և հուզականությամբ: Ֆրիկը դիպուկ ձևակերպել է. «Երբ կու ծաղկին միտքս ու հոգիս// Լեզուս իմ յանց պտուղ կու տայ»:

Ասվածը ավելի հասկանալի դարձնելու համար քննենք 6-րդ դասարանում Վ.Անանյանի «Անձրևը» պատմվածքի ուսուցման օրինակը: Սովորողի երևակայական–ստեղծագործական հմտությունների զարգացման համար կարելի է դասի սկզբում

հանձնարարել գոց աչքերով վերաշարադրել արդեն յուրացված նյութը՝ նախօրոք ընտրելով թեմային համահունչ երաժշտություն՝ Մանսուրյանի, Շոպենի, Մոցարտի, Կլայդերմանի հեղինակությամբ: Նույն նպատակի իրագործման համար կարելի է նաև առաջադրել հայտորոշիչ թեստ՝ հետևյալ բովանդակությամբ:

1. Հատվածից դուրս գրել հոգեհարազատ տողերը, վերլուծել:

2. Տեքստում գտնել ժողովրդախոսակցական ոճին բնորոշ բառերը և գրել գրական տարբերակները: Պարզել՝ ինչ զգացողություն են հաղորդում այդ բառերը տեքստին:

*3. **Ջրառատ, ոսկեզօծ, հոգեպարար, կայծակ** բառերը ենթարկել բառակազմական վերլուծության և առաջին արմատով նոր բառեր կազմել:*

4. Հատվածի համար ընտրել նոր վերնագիր և հիմնավորել:

5. Երևակայական կարճամետրաժ ֆիլմ ստեղծել հատվածի գաղափարական ընկալումով:

Նույն դասարանում մեկ այլ ստեղծագործության՝ Ավ. Իսահակյանի «Եղնիկի» համար էլ կարելի է հանձնարարել հայտորոշիչ թեստ՝ հետևյալ բովանդակությամբ.

Տրված բառերով և բառակապակցություններով կազմել գրավոր կապակցված խոսք՝«Ազատությունը՝գերագույն արժեք» թեմայով.

1. Ոսկեգեղմ անտառների մեղմ օրոր,

2. Խարտյաշ եղնիկ, սրտի թրթիռ,

3. Ազատ բնության զավակը՝գերության մեջ,

4. Եղնիկը և երեխաները,

5. Կարոտից տոչորվող եղնիկը,

6. Շնկշնկան հովերի կանչը,

7. Փոթորիկ՝հողմածեծ անտառում,

8. Ազատության ըմբոշխնումը:

Լեզվամտածողության, ստեղծագործական կարողունակությունների զարգացումը դրսևորվում է նաև ժողովրդական իմաստնության՝ առածների, ասացվածքների, միջոցով՝ «Թոկի երկարն է լավ, խոսքի՝ կարճը», «Գյուղ կանգնի, գերան կոտրի», «Ածովի հողը, ասովի խոսքը», «Կուզին գերեզմանը կուղղի» և այլն:

Ժողովրդական բանահուսության վիպական ժանրի այս փայլուն գոհարները ճանաչողական, իմացական, դաստիարակչական և ստեղծագործ մտքի արգասիքներ են. ահավասիկ «Վերք Հայաստանի» վեպում հոգևոր դասի ռեալիստական բնութագիրը խտացված է «Սար ու ձոր՝ տերտերի փոր» առածում, «Առաջնորդը ես եմ, բակլան խաշած եմ ցանում», խոսուն են նաև Մուրացանի «Գևորգ մարզպետունու» «Մի ծաղկով գարուն կգա», «Մի ձեռքն էլ ծափ կտա», Իսահակյանի «Համբերանքի չիբուխի» «Մարդը գնացական է, նրա գործը՝ մնացական» ասացվածքները։

Առածներն ու ասացվածքները օժտված են բարձր արտահայտչականությամբ, լեզվական ու պոետական հարուստ զգացողություններով։ Դրանց շնորհիվ, ըստ հստակ և ճիշտ պատեհության, խոսքը դառնում է բարեհունչ, ականջահաճո և առինքնող, իսկ խոսողը՝ ոսկեբերան։

Դիպուկ և հնչեղ են հնչյունանմանությամբ կառուցված առած-ասացվածքները՝ «Ամառվա փուշը՝ ձմեռվա նուշ», «Տվեց ոսկին, բերեց խոքին», «Սոխ ու հաց, սիրտը՝ բաց», «Արտը՝ խախուտ, մահանա՝ կարկուտ», «Մի սել սիսեռ կունենա, Աստծուն ասատուր կասի»՝ իմաստային ամենատարբեր նրբերանգներով շաղախուն։

Արդ, ժողովրդական բանահյուսության նմուշները՝ էպոս, հեքիաթ, առակ, հանելուկ, առած-ասացվածք, վիպական երգեր, գեղարվեստական խոսքում նպատակ ունեն հարստացնելու աշակերտի ստեղծագործական միտքը և դրսևորման կարողունակություններով զինելու։

Սովորողների ստեղծարարության, ինքնուրույնության և նախաձեռնողի դերում հանդես գալու մղումները համատեղելի են նախագծային ուսուցման հետ։ Ուսուցման նախագծային մեթոդը հետազոտական, ստեղծագործական մեթոդների համադրություն է, որը նոր իրողություն է ՀՀ կրթական համակարգում և դեռ փորձարկումների փուլում է։ Ուսուցման նախագծային մեթոդի կենտրոնում սովորողն է, իսկ ուսուցչի մասնակցությունը սահմանափակվում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դերերով։ Այստեղից կարելի է եզրահանգել, որ նախագծային մեթոդի հիմնական նպատակը սովորել սովորեցնել է սովորողին՝ ամեն կերպ խթանելով վերջինիս ինքնուրույն գործելու, գտնելու, գիտելիքը գործնականում կիրառելու, սեփական կարծիքն ու դիրքորոշումն առանց այլ ազդակների ներգործության հայտնելու կարողության ձևավորումը ու զարգացումը։

Հայոց լեզվի դասընթացը լայն հնարավորություններ է ստեղծում նախագծային մեթոդի կիրառման համար: Օրինակ՝ աշակերտները, հավաքելով հետաքրքիր նյութեր, բարբառային խոսվածքներ, կարող են այդ նյութերի հիման վրա կազմել ճանաչողական հոլովակներ, բեմադրել ներկայացումներ: Այսօրինակ առաջադրանքների կատարումը ևս կարող է բարձրացնել սովորողների մոտիվացիան՝ օժտելով նրանց նոր գիտելիքներով, հմտություններով ու կարողություններով:

Մեթոդական զանազան հնարների կիրառումը թույլ է տալիս ուսուցչին արդյունավետ կիրառել դասաժամը: Այսպես դասի փուլերը տրամաբանորեն շաղկապվում են միմյանց, որևէ սովորող դասին պասիվ չի մնում, բոլորն աշխատում են, հետազոտում, լուծում իրենց առաջ դրած խնդիրը: Ակտիվ ուսուցման առավելություններից մեկն էլ հենց դասի ընթացքի դինամիկությունն է, ինչը բնորոշ է այսօրվա սովորողների խառնվածքին:

Հայոց լեզվի և գրականության դասի մասնակցային սկիզբ ապահովող, միևնույն ժամանակ սովորողի երևակայությունը խթանող լավագույն մեթոդներից մեկը *Մտագրոհն* է, իսկ նույն խնդիրը լուծող, բայց դինամիկ ընթացքն ապահովողներ մեթոդներից և հնարներից կարելի է նշել *Շրջան* և *Վերնագրեր* մեթոդները, զանազան աղյուսակներ, մետաիմացության թերթիկներ և այլն: Այնուամենայնիվ հարկ է նկատել, որ բազմաթիվ մեթոդներ կիրառելիս ուսուցիչը պետք է վստահ լինի դրա արդյունավետության հարցում: Սովորողը նույնպես դժվարություններ ունի հարմարվելու ակտիվ ուսուցմանը, ինքնքկրթության մեթոդներին, ուստի ուսուցչի խնդիրն է նրան հասկանալի դարձնելու, թե ինչ է անելու և ինչու: Աշակերտը տեղյակ պիտի լինի, թե ինչ են ակնկալում իրենից, վստահ լինի, որ ուսուցիչն իրեն աջակցելու, օգնելու և առաջնորդելու է: Պարզ է, որ բազմաթիվ մեթոդների իմացությունը անհրաժեշտ է, բայց դեռ բավարար չէ դրանք հմտորեն կիրառելու, ակնկալիքներն արդարացնելու, նորարարությունն ապահովելու և բարեփոխումները իրականացնելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով սույն հետազոտության մեջ ուսումնասիրված թեմայի նպատակն ու դրանից բխող խնդիրները՝ կատարեցինք հետևյալ եզրահանգումները՝

- Հանրակրթական ուսումնական հաստատությունն առանցքային դեր ունի սովորողների մեջ մի շարք կենսական նշանակության ունակությունների, այդ թվում՝ նախաձեռնողականության, ինքնուրույնության ու ստեղծարարության զարգացման գործում:
- Վերը նշված ունակությունների բնականոն զարգացումը մեծապես կապված է ուսուցչի աշխատանքից՝ դասի պլանավորումից մինչև մեթոդների ու հնարների ընտրություն:
- Կրթական արդի բարեփոխումները մեծապես նպաստում են սովորողների մեջ հետազոտական ու ստեղծարարության ունակություններ զարգացնելու, ինչպես նաև նրանց դասապրոցեսի մեջ ավելի արդյունավետ ներգրավելուն:
- Հայոց լեզվի դասավանդման շրջանակներում ճիշտ պլանավորված դասի ընթացքը կարող է մեծապես նպաստել սովորողների մեջ գիտելիքների ամրակայումից բացի գործնական կարողություններ ձևավորելուն:
- Հայոց լեզվի դասին փոխգործուն մեթոդների կիրառումն օգնում է սովորողին լինել ավելի բաց համագործակցության համար, ինչպես նաև նպաստում է նոր կարողություններ ու հմտություններ ձեռք բերելուն;
- Առարկայի դասավանդման ժամանակ լեզվական հիմնական գիտելիքների ստացմանը զուգահեռ սովորողը լայն հնարավորություններ ունի հանդես գալու իր նորարարական գաղափարներով, ինչը հնարավոր է միայն ուսուցչի հետ ճիշտ ու կառուցողական համագործակցության դեպքում;
- Նախաձեռնողականությունը, ինքնուրույնությունը, ստեղծարարությունը արդի կրթական համակարգի և առհասարակ կյանքի այլ ոլորտների համար պարտադիր բաղադրիչ է, ուստի սովորողը պետք է ունենա բոլոր հնարավորությունները դպրոցում նման ունակություններ ձեռք բերելու և զարգացնելու:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասլանյան Ա., մեթոդական ուղեցույց, Հայոց լեզուն 7-րդ դասարանում:
2. Գաբրիելյան Է., Ուսուցման մեթոդներ, https://bit.ly/3TSA7lE (մուտք՝ 26.10.2022):
3. Զաքարյան Վ., Ափյան Հ., Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառության հնարավորությունը ուսուցման գործընթացում, «Մանկավարժական միտք», 3-4, Երևան, Զանգակ, 2014:
4. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան, 2020, էջ 22:
5. Հակոբյան Մ., Պետրոսյան Գ., Մանուկյան Վ., ՏՀՏ-ի օգտագործումն ուսուցման գործընթացում, «Գիտական տեղեկագիր», Պրակ Բ, № 1, 2013:

Հավելված I

Դ.Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքի սեղմագիր՝ ըստ դասագրքային հատվածի

Հեղինակ՝ 7-րդ դասարանի աշակերտ Ա.Շեգունց

Երբեք Հաճի Աղան այդպես անխնա չէր փոխել քայլերն իրենց տնից խանութ գնալիս: Արդեն մի շաբաթ է՝ ականջին դիպել էր, որ թուրքը գալիս է: Շփերթ քայլերով նա մտավ «մեծ օդան» և կանգնեց մեջտեղը տխուր, արձանի պես… ի՛ր տունը… Իբրև փորձված մարդ՝ իսկույն հարմարվեց կենսական իմաստնությանը՝ ազատել ամենակարևորը…

Եվ փութաց՝ հրահանգներ տալու.

-Ամենեն պետքական բաները ժողվեք, տեսեք՝ ճամփան չմնանք…

Տղաքը վազվռտուքի մեջ էին, մինչդեռ տնեցիք բոլորել էին անդամալույծի մոտ՝ ջանալով իրենց հետ տանելու վճիռը հաղթել…

Հաճի աղան պոռաց.

-Թե՛զ էրեք, ատուր վախտը չի, էկա՛ն…

Եվ կառքը ճռնչաց գերեզմանատան ճանպարհի հեծեծումով…

Հաճի աղայի ընտանիքը տեղավորվեց, տնավորվեցին փախցրած արպրուստի «շնորհքով», և կարծես թե կյանքը մի նոր հորձանուտ սկսեց…

Հունվարի սառն ու պարզ մի առավոտ Հաճի աղան դժվարացավ վեր կենալ անկողնուց: Նա մռայլվեց, պապանձվեց, ասես քարացավ… նրա հիվանդ երևակայության մեջ դաջվել էր Սրբունի ներող, խախաղ կերպարանքը՝ ձեռնոցները ձեռքում սեղմած… Հաճի մարը, տնեցիները անասելի տխուր էին…

-Թե կորուցա՞ծդ է միտքդ ընկե՝ տղաքդ սաղ ըլին. ինչի՞ կմտածես…թե Սրբունի վրա՞ է միտքդ՝ բան չունիս, ամենեն ազիզները մեռան…ջանը՛մ, դուն չըսի՞ր՝ սան ավելորդ է…

-Սու՛ս, ավելորդ մարդ չկա …աստծու առաջ հոգին հոգի է…

Մի ցուրտ, մառախլապատ առավոտ Հաճի աղայի համար քահանա եկավ…

Հաճի աղան դողալով, ասես մի բան փախցնելու պես բռնեց տերտերի փեշը, քաշեց իրեն, գրպանը հապճեպ մի բնա խոթեց, համբուրեց և մղկտաց…

Ավելորդին հոգուն համար…

Ի՞ր, թե՞ ավելորդին…

Հավելված II

Ստեղծագործական շարադրություն

Հեղինակ՝ 8-րդ դասարանի աշակերտ Ռուբեն Գյագունց

Հայաստան… սիրում եմ քեզ… Իսկ ինչպե՞ս քեզ չսիրել,երբ դու համակ սեր ես և լինելություն… Ես հիմա խոսում եմ քեզ հետ, որովհետև դու ես իմ ներքին վկան, իմ եսը, իմը… Դու այնքան տարիքով ես, որ իմ պատանության չափ կենսասեր ես, կյանքով լի և սիրահարված կյանքին… Իմ իմաստուն ու մե՛ծ ընկեր, այսօր եղիր զրուցընկեր, եղիր անհոգ, եղիր շենշող, պարզապես, եղիր… Դու զգացել ես, որ ես սիրում եմ քո փողոցների եռքը, մայթերիդ պառկած թափառող որբ շների տխուր աչքերի աղերսանքը, տարվա բոլոր եղանակներիդ ապրելու շռայլ արբունքը, երկինք շպրտված Մանուշակ տատիս լաջվարդ շապիկի մարդահոտ ծվենը և կսկիծով վայող քամու հոգեսարս շաչյունը…Ամենը սիրել եմ, Հայրենի՛ք… ամենքիս ներող, քո գիրկը բերող, հավերժ զավակներիդ տունդարձին սպասող…Հայրենի՛ք… Ես քո զավակն եմ, տերն ու հպատակը… Ես քեզ սիրում եմ… Հայրենի՛ք…

Հավելված III

Հացի խորհուրդը

(կապակցված խոսք)

Հեղինակ՝ 6-րդ դասարանա աշակերտ Սուրեն Գյագունց

Հացով երդվել են՝ «Էս հացը վկա», հացով՝ ճանաչել՝ «Կուզե՞ս մարդուն ճանաչել՝ հետ հաց կեր կամ ճանապարհ կտրիր», «Հացը՝ թագավոր, ջուրը՝ վեզիր, մնացածը՝ զզիր-մզիր»…

Հայրս այս պատմությունը լսել է իր Ռուբեն պապից՝ իմ Ռուբեն նախապապից.«Թուրք ազերին, Աղավնոյից բարձրանալով Տեղ գյուղի սարավանդը և տեսնելով մարդաբոյ ցորենի աստղալից հասկերով ակաղձուն դաշտը, մազապուրծ փախել է՝ ասելով՝ «Էս ժողովուրդն անմեռ է ու ամենահաղթ»»:

Առեղծվա՞ծ է՝ աստղալից հասկի ցորնահատիկները առանց մնացորդի բաժանվում են յոթի… Ես խաղաղություն եմ ուզում։ Չէ՛, ուզելը քիչ է… տենչում եմ, որ իմ Հայրենիքի անապակ երկնքում շողան ցորեն-ցորեն բազում աստղեր… և հավերժվեն Հայն ու նրա արարած հացը հանապազօրյա ….